

ՄԱՐԳԱՐԷՆ

Պիտի սիրեն քեզ անշուշտ անժամանակ մահէդ վերջ
Երբ ա՛լ մարմինըդ փրտի, ըլլայ հաստ հող ու փոշի.
Դադրի ռունգերը խոցող յոռի նեխումն ըլլալէ.
Եւ հողակոյտդ ալ կազմէ հասարակաց գետնին մաս:

Յայնժամ խոհերըդ պիտի, գաղափարներըդ աճին
Եւ թափանցեն մըտքերէն ներս բազմազգի մարդերու,
Ու ըստեղծեն նորանոր խըլըրտումներ փոխանցիկ.
Ըլլան դըպրոց ու շարժում եւ ներշնչող տաք բարիք:

Պիտի անշուշտ քեզ սիրեն. ոմանք նոյնիսկ սըրտեռանդ
Պաշտեն պիտի հիացմամբ, նոր խօսքերով ընդմէջէն
Իրենց չըսուած, զլացուած զգացումները գաղտնի

Հայելոյն մէջ տեսնելով: Բայց մահէդ վերջ, նեխումէն:
Մինչ այդ կ'անցնիս առանձին, այս լըքումին մէջ լըման
Յարամարմաջ - ուղեղիդ գոհն ու հերոսն ըլլալով:

ԱՆԵԼ